

ԿՈՂՈՊՈՒՄՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԱԼԻՔԸ. ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ, ԹՈՒՐԻՔԻԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ*

Լևոն Շիրինյան

...պատմությունը սովորեցնում է անալոգիաներով,
լույս սփռելով համադրվող իրադրությունների նման հետևանքների վրա...

Հ.Քիսինջեր

Ջարմանալի է պատմության ընթացքը:

Հաճախ է թվում, թե նրա հոլովությունում անդարձ թաղված հարցը վերադարձի հնարավորություն չունի այլևս: Թերևս այդպես էլ է մեծավ մասամբ: Սակայն, արի ու տես, որ այս «կանոնը» չի տարածվում մի ժողովրդի պատմական ընթացքի վրա, որը դեռևս ոչ վաղ անցյալում (1919-1920 թթ.) կանգնել էր պատմության ասպարեզից իսպառ չքանալու վտանգի առաջ:

Դա թուրք ժողովուրդն է, որի վերակենդանացումը Օսմանյան կայսրության հոգեվարքի վերջալույսին կարելի է դասել համաշխարհային պատմության պարադոքսների թվին: Մի ժողովուրդ է և մի պետականություն, որը վերակենդանացավ բացառապես իր գերեզմանափորի՝ Ռուսաստանի ջանքերով և բոլշևիզմի ազգային դավաճանության հետևանքով: Մի գերեզմանափոր, որին հաջողվեց իր հովանավորային, այն է՝ արդեն կերպարանափոխված քեմալական թուրքիային փրկել Սևրի գլխոտինից, որին նա արժանացել էր իր դարավոր ոճիրների ու նաև արմենոցիոյի համար:

Եվ այսօր աշխարհի ուժեղների առատածեռն օժանդակությամբ զգալի հաջողությունների հասած երկիրը շուրջ 70 մլն (2005թ. հուլիս) բնակչությամբ (20%-ը ոչ թյուրքական ժողովուրդներ, արևմտյան փորձագետների գնահատականներով երկրի բնակչության ընդհանուր թվի մեջ էթնիկ թուրք է հազիվ 40-50 %-ը) [1] 1683 թվականից հետո, արհամարհելով Կառլովիցիի (1699թ.) դասերը, նորից թակում է Վիեննայի դարպասները: Առաջին անգամ յաթաղանով, այս անգամ թուրքական կիսալուսնի վրա դաջված «եվրոպական արժեքների» մուրհակով, առաջին անգամ համաշխարհային տիրապետության մղվող ենիչերիի ուժով, այս անգամ պնդերես մի անկրջ հյուրի տեսքով:

Իսկ նորից պաշարված Եվրոպան՝ գերի իր ավանդական եսակենտրոնությանը, շունչը պահած սպասում է թուրքական հերթական գրոհին... Եվ անվերջ խուսանալովում է...

Մերժման հարափոփոխ փաստարկների և պատճառաբանությունների շարքում օդի մեջ նորից բռնադատված Հայկական հարցն է, նույն «եվրոպական համանվագը», այս անգամ թուրքիային ներկայացվող Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջ-սպառնալիքով: Այն անմոռաց հայոց հարցը, որը տասնամյակներով ծառայեցվեց տխրահռչակ «եվրոպական համանվագին» հանուն «հին աշխարհի» հավասարակշռության և բարօրության: Հայոց այն հարցը, որն, ըստ էության, զոհաբերվեց հենց նույն հավասարակշռությանը...

Խոսքը Միացյալ Նահանգների (անվանենք այն անզլո-սաքսոնյան ռազմավարություն) հզոր աջակցությամբ «եվրոպական ընտանիքում» տեղավորվելու թուրքական անկասելի մղման մասին է, որն ունի հեռագնա նպատակներ: Առաջինը թերևս թուր-

* Հոդվածն ընդունվել է 11.02. 2015:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՍՀ պատմության ամբիոնը:

քիայի տնտեսական շահերն են՝ շատ լայն ենթատեքստով: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ Լիբիայի երբեմնի առաջնորդ Մուամմար Քադաֆին նկատում էր. «Մահմեդական աշխարհը շահագրգռված էր, որ այնպիսի մահմեդական երկիր, ինչպիսին Թուրքիան է, մտնի Եվրոպական միություն և այնտեղ խաղա «տրոյական ձիու» դերը, որին նպաստում է Թուրքիայի «փափուկ» իսլամը[2]:

Իսկ Եվրոպան էլ միայն շահագրգռված է, որ Թուրքիան մնա Հյուսիսատլանտյան միության անդամ, որպես ռազմական բազա և գաղութ ու միայն այդքանը: Եվրոպային շահավետ չէ, որ Թուրքիան մտնի Եվրամիություն»: Փորձագետների գնահատականներով՝ 2015 թվականին, եթե պահպանվեն բնակչության աճի տեմպերը ներկա մակարդակի վրա, Թուրքիայի բնակչությունը կգերազանցի 80 մլնը: Իսկ դա նշանակում է, որ Եվրախորհրդում Թուրքիան կունենա ամենաշատ տեղեր «և մենք, – ընդգծում է հակաթուրք պայքարի Եվրոպական խորհրդանիշ Վալերի ժիսկար դը Էստենը, – նորից կգանք Արևմուտքի և Արևելքի հակադրությանը»:[3] Թերևս տարողունակ է և խորքային Բեռնարդ Լյուիսի դիտարկում-ընդհանրացումը. «Մահմեդականների՝ Ջիբլարթարից 1492թ. նահանջից հետո, – ասում է նա, – առաջին անգամ Եվրոպայում ստեղծվում է մահմեդական հզոր և մշտական ներկայություն: Այդ հանգամանքը կունենա անկանխատեսելի, սակայն մասշտաբային հետևանքներ ինչպես Եվրոպայի ապագայի, այնպես էլ իսլամի համար»:[4] Իսկ Թուրքիայի ընդունումը Եվրամիություն, հիշեցնում է մի մարդու օրգանների փոխպատվաստումը նրան օտար և կենսաբանորեն անհամատեղելի մի այլ մարդու վրա, եզրակացնում էր Մ.Քադաֆին: Ապշեցուցիչ ճշգրտությամբ նույն Քադաֆին վեր էր հանում դիմափոխված Թուրքիայի իրական պատկերը: «Թուրքիան, – գրում է նա, – դա մի ծառ է, որն արմատներով ձգվում է դեպի Ասիա, և միայն ճյուղերով է հպվում Եվրոպային: Ավանդույթներով, սովորույթներով, մշակույթով, վարքով, հակումներով դա իսլամական, սուննիական պետություն է»: «Թուրքերի նախնիները, – հիշեցնում է Քադաֆին, – սելջուկներ են և իրենք՝ թուրքերը, ժողովուրդ նվաճողներ»: Նրանք Եվրոպան դիտել են միշտ որպես զավթման ու նվաճման օբյեկտ: Եվ, ի վերջո, Թուրքիան պայթումավտանգ խնդիրների թնջուկ է: «...Ապագան Թուրքիայում, – գուշացնում-կանխատեսում էր Քադաֆին, – պատկանում է իսլամական կուսակցություններին և Բեն Լադենի կողմնակիցներին»:[5]

Երկրորդն, անշուշտ, Միացյալ Նահանգների վախն է երկբևեռ աշխարհի անցման հեռանկարի հանդեպ, որի մեջ նա տեսնում է իր մահացու ախտյանին: Անգլիական «էկոնոմիստը» գրում է. «Եվրոպացիները ցանկանում են ամրապնդել իրենց հզորությունը մինչև այն աստիճան, որպեսզի կարողանան իրենց առանձնացնել Ամերիկայից: Աշխարհում չկա ոչ մի այնպիսի ուժ, որը կարողանար ցուցադրել այդքան հզոր կամային ակտ (ընդգծումը մերն է - Լ. Շ.)»:[6] Նույն տեսակետն է հայտնում նաև Ֆրանսիայի նախկին արտգործնախարար Յու. Վեդրինը: Ահա այս կամային ակտն է, որ, ինչպես մեզ է թվում, պետք է խորտակի Թուրքիան, հանուն «ընկերության» թույլ չտա Եվրոպայի միափորում-միաձուլումը որպես երկրորդ բևեռի: Դրան նպաստում է, համաձայն Բ.Օբամայի դիրքորոշման, Թուրքիայի էլիտայի և ազգաբնակչության մեջ Արևմուտքի հանդեպ ընդհանրապես թշնամանքի բացակայությունը և այդ երկրի կայուն ձգտումը մտնել Եվրամիություն [7]*:

Հասկանալի է, որ գիզանտների այս մենամարտում մեր դիրքորոշումն ու հորդորները քիչ արժեք ունեն: Ինչպես նաև անլուրջ կլիներ ենթադրելը, թե «Եվրոպական ակնկալվող ճնշման» չափը թույլ կտար Թուրքիային, հայոց ունեցվածքին տեր դարձած թուրք «վերնախավին» ու շարքային տասնյակ միլիոնավոր թալանչուն պարտազրել իր պետականության արյունոտ հիմքերը ցնցող Հայոց ցեղասպանության ճանաչու-

մը: Իսկ մեզ համար, այդուհանդերձ, հավատացեք, ամեն ինչից ԱՆԴԻՆ գոյություն ունի Գերհարցը, Հարցերի հարցը:

Այն է՝ խառնակ այս ժամանակներում, աշխարհասփյուռ մեր ժողովրդի և մերօրյա Հայաստանի անվտանգության հիմնախնդիրներին ադերսսվող ջրապտույտի մեջ մեր ո՞ր դիրքորոշումն է համապատասխանում Հայաստանի Հանրապետության կենսականորեն կարևոր շահերին՝ առաջին և երկրորդ՝ ինչպե՞ս թույլ չտալ Եվրոպային հերթական անգամ օգտագործել Հայկական հարցը բացառապես իր համար և իր հայեցողությամբ: Այն Եվրոպային, որը, որդեգրելով Ցեղասպանության ճանաչման ականախրախուսողի դիրքորոշում, ձգտում է որևէ պարտավորություն չստանձնելու Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ**, որը մի թիզ անգամ չի ցանկանում նահանջել Ադրբեջանի թուրքական հանրապետության տարածքային ամբողջականության կեղծ և շինծու թեզիսից: Այն Եվրոպայի, որը, մի դեպքում, կամա-ականա ընդունելով Հայոց հարցի մի դրսևորումը՝ Ցեղասպանության ճանաչման տեսքով, շեմքից մերժում է նրա մի այլ դրսևորումը՝ հայոց համար կյանքի խնդրի վերածվող ԼՂՀ անկախության ճանաչման հիմնախնդիրը:

Ակներև է, որ տվյալ դեպքում հայոց համար վատթարագույն դեր կխաղային գաղափարախոսական դոգմաները, ինչպես 1912-1913 թվականներին Բալկանյան պատերազմների շրջանում, առավել ևս երկրաքաղաքականության պահանջների անտեսումը: Թուրքիան հեռանկարի մեջ ունի ռազմավարական ընտրության երեք տարբերակ, երեք ուղղություն: Ռազմավարության հայտնի հեղինակություններից Զբիգնև Բժեզինսկին, անդրադառնալով այս հարցին, գրում է. «Թուրքիան հետկայսերական պետություն է, որը գտնվում է դեռևս իր ընտրության որոշման գործընթացի մեջ, ձգում է երեք ուղղություններով, մոդեռնիստները ցանկանում են նրանում տեսնել եվրոպական պետություն, և հետևապես նայում են դեպի Արևմուտք, իսլամիստները հակված են դեպի Մերձավոր արևելք և մահմեդական համագործակցության և, այսպիսով, նայում են դեպի հարավ, դեպի պատմություն նայող ազգայնականները տարածաշրջանում տեսնում են Կասպից ծովի ավազանի և Միջին Ասիայի թուրքական ժողովուրդների նոր դերակատարությունը և այդպիսով նայում են դեպի Արևելք (ընդգծումը իմն է-Լ.Շ.-): Այդ հեռանկարներից յուրաքանչյուրը պտտվում է տարբեր ռազմավարական առանցքների շուրջ և քեմալականների հեղափոխությունից հետո առաջին անգամ այդ դիրքորոշումների միջև բախումն անվստահություն է մտցնում Թուրքիայի տարածաշրջանային դերի հարցի մեջ»:[8]

Ընդ որում մեզ համար չափազանց կարևոր է եզրահանգումը. եթե Թուրքիայի եվրոպականացումը անհաջողության մատնվի ներքին, թե արտաքին պատճառներով, ապա Հայաստանն ու Վրաստանը ստիպված կլինեն «հարմարվել Ռուսաստանի շահերին»: Ի դեպ, նկատենք. մեկ անգամ՝ 1920 թվականի ծմբեռամուտին, Հայաստանն արդեն հարմարվել է Ռուսաստանի շահերին: Հետևանքներն առավել քան պերճախոս են, եթե չասենք ավելին: Նրանց ապագան այդ դեպքում կվերածվի Ռուսաստանի մանիպուլյացիաների գործառնույթի՝ կախված Ռուսաստանի՝ ընդարձակվող Եվրոպայի հետ հարաբերությունների և տարածաշրջանային այլ շահագրգռությունների «կարգավորումից»: Թուրքիան, ենթադրում է նույն Բժեզինսկին, շարունակելով «իրեն զգալ Եվրոպայում իզոթյ (վտարակ - Լ.Շ.), կդառնա ավելի իսլամական»: Այս ենթադրության մեջ, անշուշտ, Բժեզինսկին ճիշտ է մասամբ: Այդ տողերը գրելուց (1998թ.) հետո շատ ջուր է հոսել նոր աշխարհակարգի կերտման ճանապարհին: Մասնավորապես, անզուսաքսերը տևականորեն և հաստատապես տեղավորվում են նորից Մերձավոր Արևելքի սրտում՝ Միջագետքում (Իրաք), ուստի և Թուրքիան նշյալ պայմաններում ավելի

շուտ կդառնա ազգայնական՝ փաթեթավորված «փափուկ իսլամի» փաթեթով: Եվրոպայից վտարված, արաբական Արևելքից հեռու վրնդվող Թուրքիան «վիրավորված», սակայն իր վերագտնվող հզորությունից արբեցած, կփորձի տարածվել դեպի Արևելք, դեպի նվիրական Թուրան: Այս դեպքում է, որ Եվրոպայի խնդիրը ուղղակի իմաստով նորից հավաքական հայության և Հայաստանի Հանրապետության համար, առանց անվտանգության կայուն և շոշափելի երաշխիքների, կդառնա գերխնդիր: Մեր այս պնդումն ամենևին էլ ֆանտաստիկայի ոլորտից չի վերցված: Ռազմավարական-քաղաքական այս տարբերակն ունի նույնիսկ պատմական իր նախադեպ-մանօրինակը՝ 1918-1920 թվականների թուրքական ավերիչ այսրկովկասյան արշավանքների տեսքով: Ուստի և եվրոպական քաղաքակրթության հերթական գալարը կարող է հայոց համար «անսպասելիորեն» վերածվել իրական և «իրատեսական» մղձավանջի...

Նման դեպքերում է, որ ծնվում է առեղծվածային հարցը. իսկ դա ո՞ւմ է ձեռնտու: Եվ, ի վերջո, այն ինչքանո՞վ է շահավետ Հայաստանի Հանրապետության համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Дергачев В. Геополитика, Киев, 2000, стр 259:
2. Савельева Н., Турция и ЕС. Между Европой и Азией. — "Азия и Африка сегодня", 2003, № 7, стр. 37-41: Шумилина И. "Мягкая сила" Барака Обамы: расчеты и прорасчеты. "США-Канада: экономика, политика, культура" 2010, № 9, стр 4.
3. "Азия и Африка сегодня", 2003, № 7, стр. 40.
4. Льюис Б. Ислам и запад. М., 2003 стр. 72. Добаев И. Исламизация Европы: мир или реальная угроза? - "Мировая экономика и международные отношения", 2008, стр. 50.
5. Кадафи М. Турция, Европа и Бен Ладен, "Азия и Африка сегодня", 2003, №4, стр 33.
6. Уткин А., Мировой порядок XXI века, М., 2001, стр. 241:
7. "США- Канада: экономика, политика, культура", 2010, № 9, стр. 48:
- * ԱՄՆ հերթական վարչակարգերի որդեգրած տեսակետը այս վերջին հարցում ուղղագիծ է, ուստիև քիչ արդյունավետ: Տվյալ պարագայում իրականությունը մոտ է ծայրահեղ թրքասեր, կարելի է ասել պատմաշինարար Քերրոլայն Ֆինկելի դիտարկումը, երբ գրում է. «Սկըը մինչ օրս իր չարագուշակ ստվերն է նետում Թուրքիայի վրա, որտեղ վաղուց վախենում են, որ օտարերկրյա թշնամիներն ու դավաճանները Թուրքիայի ներսում նորից կարող են փորձել բաժանել երկիրը, որը պաշտպանել են այդպիսի համառությամբ և վճարել են դրա համար այդպիսի բարձր գին: Թուրքական հասարակության որոշ շրջանների դիրքորոշման վրա Եվրամիություն մտնելու հավանականության հարցում իր ազդեցությունն է թողնում Սևրի ուրվականը, իսկ եվրոպացիների մտադրությունները ենթարկվում են մանրակրկիտ վերլուծության՝ նրանցում երկերեսանիության նշաններ հայտնաբերելու նպատակով» (Финкель К. История Османской империи. Видение Османа. Пер. с англ. М., 2010, стр. 747).
- ** Եվրամիության հայկական տեսակետը տե՛ս . «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին», 1987թ., հունիսի 18 ("European Parliament". Doc. A2-33/87):
8. Бжезинский Зб. Великая шахматная доска. М., 1999, стр. 161:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Կողոպուտի երկրորդ ալիքը. Եվրամիությունը, Թուրքիան և Հայաստանի Հանրապետության ազգային շահերի գերակայությունը:
Լևոն Շիրինյան**

Հոդվածը նվիրված է կողոպուտի դասական երկրի՝ Թուրքիայի ռազմավարական նախասիրությունների ավանդական տարբերակների՝ իսլամական, ազգայնական և աշխարհիկ քննարկմանը, դեպի Եվրոպա Թուրքիայի քաղաքական ուղղորդվածության լուսաբանմանը, Եվրամիության «թուրքական» քաղաքականության իրական բովանդակության բացահայտմանը:

Բանալի բառեր՝ Թուրքիա, Եվրամիություն, Հայաստանի Հանրապետություն:

РЕЗЮМЕ

**Вторая волна грабежа. Евросоюз, Турция и верховенство национальных интересов Республики Армения
Левон Ширинян**

Статья посвящена традиционным стратегическим предпочтениям Турции – страны классического грабежа, рассматриваются исламские, националистские, светские аспекты вопроса, освещается политическая направленность Турции в Европу, выявляется истинное содержание «турецкой» политики Евросоюза.

Ключевые слова: Турция, ЕС, Республика Армения.

SUMMARY

**The second wave of robbery. The European Union, Turkey and the priority of national interests of Armenia
Levon Shirinyan**

The article is dedicated to the discussion of Islamic, nationalist and secular versions of Turkish traditional strategic predilections as one of the classical countries of robbery. It also discusses the issue of the European direction of Turkish policy and reveals the real content of EU's policy towards Turkey.

Keywords: Turkey, EU, The Republic of Armenia